



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

37
—
5.67

17374

1880 - 1882

4 Dmhu

12001

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ

Հ Ա Յ Ո Ց

Մ 7 6 7

ԱՐՄԱՏԵԱՆ, ԴՊՐՈՑԱՍԻՐԱՅ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԿԵԼԻԿԻԱՆ)

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի 1 ՅՈՒՆԻՍ 1880

Ն Պ Ա Տ Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԿԵԼԻԿԻՈՅ ՄԷՋ ԿՐԹՈՒԹԻՒՆ ԾԱԽԱԼԵԼ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՐԿԱՄԵԱՅ

1880 ՅՈՒՆԻՍ 1 — 1882 ՄԱՅԻՍ 31

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

- Ա. ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ
- Բ. ԲԱՐԵՐԱՐՔ ԵՒ ՊԱՏՈՒՅ ԱՆԴԱՄՔ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
- Գ. ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
- Դ. ԿՐԹԱԿԱՆ ՑԱՅՏԱԳԻՐ
- Ե. ՎԻՃԱԿԱԳԻՐ ՎԱՐՃԱՐԱՆԱՅ
- Զ. ՆՈՒԲԵԱՏՈՒԹԻՒՆՔ
- Է. ՑՈՒՑԱԿ ԲԱԺԱՆՈՐԴԱՅ
- Ը. ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒՔ



2010

ԿԵՂՈՆԱՏԵՂԻ

44, 42, 43, ԿԵՕԶԵ ՕԳԼՈՒ ԽԱՆ, ՂԱԼԱԹԻԱ

Կ. ՊՈԼԻՍ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ

ԴԻՒԱՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

- Նախագահ Ս. Տ. Առաքել Ալթուն-Տիւրբի
- Դեր-Նախագահ » Տիգրան Հիւնքեարպէյէնտի
- Ատենագլխի » Գասպար Չերազ
- Դեր-Ատենագլխի » Մարգար Պէլլիկճեան

ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎ

- Ատենագլխա Ս. Տ. Գէորգ Ասլանեան
- Ատենագլխի » Յովհաննէս Թորոսեան
- Ուսումնագլխա » Կարապետ Կարճեան
- Հասցիւթից Տնօրէն » Լեւոն Պէյ Գաբամանճեան
- Գանձագլխա » Գրիգոր Շամանճեան
- Համարակալ » Յովսէփ Եռսուֆեան
- Մախուց Տնօրէն » Յակոբ Նշկեան
- Խորհրդակալան » Գէորգ Սամանճի
- Խորհրդակալան » Ստեփան Տամատեան

ԴՐՍՄԱՊԱՀ

Ս. Տ. Սերովբէ եւ Մարգիս Կիւլլէնիկեան

ՆԱԽՈՐԴ ԱՏԵՆԱՊԵՏՔ ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՑ

- Ս. Տ. Գէորգ Ապուլլահ
- » Յովհաննէս Թորոսեան
- » Տօբթէօր Տիգրան Փէշախալճեան
- » Մինաս Չերազ

37
5-67

370
2283-ՏԵ



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ի Ր

ԵՐԿԱՄԵԱՑ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ՀԱՅՈՑ

1880-1882

1004
15705

8907

076
ՅԶ-ԵՅՁԲ

Պ Գ Տ Մ Պ Գ Բ Գ Զ

Յ Մ Յ Մ Մ Մ Յ

Յ Կ Մ Յ Գ Կ Մ Յ Գ Կ Մ Յ Գ Կ Մ Յ Գ Կ Մ Յ Գ Կ Մ Յ Գ Կ Մ Յ Գ

Յ 0 0 8 Ս 2

Շ 8 8 1 - 0 8 8 1

Գաւառաբնակ Ազգայնոց մէջ կրթութիւն ծաւալելու նպատակաւ հետզհետէ կազմուած էին Արարատեան, Գպրոցասէր-Արեւելեան եւ Նիլիկեան Ընկերութիւնք, եւ մինչդեռ սոյն Ընկերութեանց իւրաքանչիւրն իւր գործունէութեան շրջանակն ընդարձակելով՝ կը ջանար յառաջ մղել կրթական այդ վսեմ գործն, յայտնի երեւցաւ որ հասարակաց կարծիքն, որոյ արձագանգ կուտար ազգային մասունքն, յիշեալ Ընկերութեանց միացումն կը պահանջէր : Մի եւ նոյն նպատակի ծառայող հաստատութիւնք չը կրնալով չը համակերպիլ ազգին բաղձանաց, որոյ հանդանակութեամբն կազմուած եւ որոյ նուէրներով ապրելու կոչուած էին, կ'ստիպուէին խոնարհիլ ազգին կամաց առջեւ եւ ընդունիլ առաջարկուած միացումն : Ուստի յիշեալ երեք Ընկերութիւնք 1880 Յունիս 1 է սկսեալ ձուլուեցան ՄԱՅՍՅԱԸՆԿԵՐՈՒԹԱՆ ԼՍՅՈՑ սնունտի ներքեւ :

Սոյն գործողութիւնէն յետոյ Ընկերութեան առաջին գործերէն մին էր մէկ կողմանէ հասոյթից աղբիւրներն բազմացնելով՝ Ընկերութեան գործունէութեան շրջանն սարածել, միւս կողմանէ ներքին գործերն հետզհետէ կանոնաւորել, այնպէս որ իւր աշխատութեանց հետեւանքն գործնականապէս արդիւնաւոր լինի : Այս նպատակաւ Ընկերութիւնն թաղային եւ դաւառային մասնախումբերու դրութիւնք հաստատեց, որով դիւրութիւն կը մատուցանէր ամեն կարգի անձանց որք կամին Ընկերութեան օժանդակել, ուստի եւ մասնաւոր կանոնադրութեամբ նոր Մասնախումբեր կազմուեցան մայրաքաղաքիս զանազան թաղերու, ինչպէս նաեւ մի քանի քաղաքաց մէջ : Ներկայ երկամեայ շրջանին մէջ ազգասէր անձինք թափաբական ներկայացումներ տալով՝ ջանացին օգնել Ընկերութեան : Նոյնպէս անդի ունեցան երկու պարահանգէսք, առաջինն ընդ պաշտպանութեամբ Գազդիոյ դեսպան Վսեմ. Թխոյի, եւ երկրորդն ընդ պաշտպանութեամբ Բրիտանական դեսպան Վսեմ. Ղորտ Տիւֆէրընի : Պարտանձին կը համարիմք յիշատակել աստ թէ 'ի չնորհս այս երկու պարահանգէսներու հասոյթից, Ընկերութիւնն կարողացած է չարունակել իւր ընթացքը : Ուստի կը յայտնեմք մեր խորին չնորհակալիքն այն ամեն ազգա-

սէր անձանց, որք ամեն ջանք 'ի դործ գրին պարահանգէսից յաջողման համար, եւ այս աստիճան մեծաքանակ գումարներ ընդն կերութեանս :

Ընկերութեան կարեւոր գործերէն մին էր նաեւ կրթական յայտադիր մը պատրաստել, որպէս զի Ընկերութեան բոլոր վարժարաններն մի եւ նոյն ուղղութեամբ ընթանան : Միացեալ Ընկերութեանց վարժարաններն նախնական եւ կեդրոնական երկու կարգ նախակրթարանաց բաժնուած լինելով՝ պատրաստուած յայտադիրն, զոր ընթերցողք պիտի դասեն ներկայ տեղեկադիրն մէջ, այդ վարժարանաց ուսմանց ընթացքն ու եղանակը կը գծէ :

Միացեալ Ընկերութեան վարժարաններն, ինչպէս պիտի տեսնուի տեղեկադիրն մէջ, բաժնուած են չորս կեդրոններու որք են Վասպուրական, Տուրուբերան, Տաւրոս եւ Նիլիկեա :

Մինչդեռ Ընկերութիւնն կը ջանաց իւր գործառնութեանց աահմանն ընդլայնել, մի եւ նոյն նպատակի հետեւող այլ եւ այլ Ընկերութիւնք, Գաւառական Մարմինք եւ ազգասէր անձինք Ընկերութեանս կը յանձնեն իւրեանց ծախիւք բացուած վարժարանաց վարչութիւնն : Ազգ. Հայուհեաց Ընկերութիւնն ունի արդէն երկու վարժարաններ, մին 'ի Քղի եւ մյւսն 'ի Հաճըն : Նոյնպէս Բարեգործական Ընկերութիւնն ունի երկու նախակրթարաններ, մին 'ի Ալու եւ մյւսն 'ի Վէմ : Սուցա օրինակին հետեւած են մեծանուն ազգասէր Պ. Մ. Սահասարեանց, Սովետոյ բազմաբազուն Յանձնաժողովը, Վեմ. Տ. Ծաղկեան Պողոս ինչպէս նաեւ Ատանայի, Քղիի, Բերլոյ, Չէվիրմէի եւ Գովանաքի տեղացիք :

Միացեալ Ընկերութիւնք ներկայ առիթէն օգուտ քաղելով կը փութան կրկնել իւրեանց ջերմացին չնորհակալիքն առ Վեմ. Կաթուղիկոսն ամենայն Հայոց որ հաճած է Ալաշկերտի գաղթականաց համար հանդանակեալ գումարին տոկոսն Ընկերութեանս Ալաշկերտի վարժարանին յատկացնել : Նոյնպէս մեր խորին երախտագիտութիւնն առ Բարձ. Պատրիարք Հայոց Տ. Տ. Ներսէս Վարժապետեան, որ բաց 'ի իւր հովանաւորութիւնէն, նախրեց երկամեայ շրջանիս մէջ 350 Ծով. ոսկւոյ մաս գումար մը :

Նուիրական պարագ մ'է մեզ համար յանուն Ազգին մեր սրտագին մաղթանքներն ուղղել առ Աստուած Օգոստախառ Սուլթանի կենաց երկարութեան համար, որոյ բարձր հովանւոյն տակ Ընկերութիւնն կարողացած է կրթութիւն ծաւալել Օսմանեան Պետութեան Հայաբնակ դաւառաց մէջ:

Ձերմ շնորհակալիք նաեւ այն ազնիւ ազգայնոց եւ օտարաց որք նիւթապէս կամ բարոյապէս օժանդակեցին Ընկերութեանս թէ 'ի ճաճկաստան, թէ 'ի Ռուսիա եւ թէ այլուր: Նոյնպէս շնորհակալիք աղղային, ինչպէս նաեւ օտար մամուլ որ չէ գաղթած հրաւեր կարգաւ ժողովրդեան յօժանդակութիւն մեր Ընկերութեան:

Վերջապէս Ընկերութեան ջանքն լինելով մանկավարժական արդի պահանջմանց համեմատ իւր նախակրթարանաց վիճակն բարեփոխել եւ նորանոր վարժարաններ բանալ կրթութենէ զուրկ վայրերու մէջ, կը կարօտի ցարդ վայելած աջակցութենէ առաւել մի ընդարձակ աջակցութեան. ուստի հրաւեր կը կարգայ ամբողջ Ազգին չը խնայել ամեն զոհութիւն դաւառացեաց կրթական եւ բարոյական վիճակն բարեփոխելու համար: Կեանքն անհամար քաղաքներ ու գիւղեր որք մինչեւ ցարդ չեն վայելած մեր Ընկերութեան այցելութիւնն եւ կը գտնուին խորին սղիտութեան մէջ: Մեր վարժարանաց թիւն դեռ ոչինչ է համեմատաբար գաւառաբնակ ազգայնոց կրթական պիտոյից. ուստի կը պարտաւորիմք այս թիւն անեցնել դրամական մեծագոյն միջոցներ հայթայթելով: Երբ ամեն Հայ կը խոստովանի թէ գաւառացիք կրթութեան պէտք ունին եւ բարոյական մի ողբալի կացութեան մէջ կը գտնուին, կրնանք անտարբեր մնալ եւ չը մասնակցիլ մեր եղբարց եւ քերց դաստիարակութեան գործին:

Միացեալ Ընկերութիւնք վստահելով ժողովրդեան ազգասիրութեան վրայ, կը հաւատան թէ այսուհետեւ հզօրացոյն օժանդակութիւն պիտի գտնեն ամեն դասի աղղայիններէ, եւ այս հաւատով կը շարունակեն անհախառն անձնուէր պաշտօնն համբերատար յարատեւութեամբ:

Կ. Պօլիս, 31 Մայիս, 1882.

ԲԱՐԵՐԱՐՔ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Վեհախառ Տ. Տ. ԳԵՈՐԳ Դ. Կաթողիկոս ամենայն Հայոց. Բարձրաշնորհ Տ. Տ. ՆԵՐՍԷՍ Արքեպիսկոպոս Վարժապետեան Պատրիարք Հայոց Թուրքիոյ.

Պ Ա Տ Ո Ւ Ո Յ Ա Ն Դ Ա Մ Ք

- Տ. Տ. Գրիգոր Արծրունի, խմբագրապետ Մշակ լրագրոյ.
- » Ե. Գէորգեան Փիթոյեանց, 'ի Տփղիս.
- » Յովհաննէս Վարձեղուլեանց, 'ի Բագու.
- » Ա. Նաւասարդեան, 'ի Վաղարշապատ.
- » Սարգիս Սվածեան (վախճանեալ), 'ի Կ. Պօլիս.
- » Յովհաննէս Այվազովսքի, 'ի Թեոքոօսիա.
- » Յովակիմ Գեղամեան, 'ի Ախալցխա.
- » Սուքիաս Նալպանտեան, 'ի Վաղարշապատ.
- » Աստուածատուր Շահինեան, 'ի Մաշ.
- » Ջէյրս Պրայս, Անդամ Անկիլիական Բարձրաշնորհի.
- Տիկին Ջարուհի Սարգիս Համամեան, 'ի Կ. Պօլիս.
- Օրիորդ Կալինիկէ Ասատուր, 'ի Կ. Պօլիս.

Թ Ղ Թ Ա Կ Ի Յ Ա Ն Դ Ա Մ Ք

- Տ. Տ. Եղուարդ Գօնթրսթֆօրդ Ֆօրթիզմ, Անկիլիացի Հաղարապետ.
- » Հանրի Ֆանդօֆ Թօղրր:

Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր Մ Ի Ա Ց Ե Ա Լ Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ց Հ Ա Յ Ո Ց

(ԱՐԱՐԱՏԵԱՆ, ԳՊՐՈՑԱՍԻՐԱՑ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԿԻԼԻԿԻԱՆ) Ի 1 ՅՈՒՆԻՍ 1880

ՆՊԱՏԱԿ — Հայաստանի եւ Կիլիկիոյ մեջ կրթութիւնն ծաւալել:

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

- Յօդ. Ա. Տնօրէն ժողովոյ հաւանութեամբ ընկեր կընդունուի ամեն Հայ երկու սեռէ, որ կը փախաքի անդամակցիլ եւ կ'ընդունի պատակիլ Ընկերութեան օրինաց:
- Յօդ. Բ. Անձնիւր ընկեր պարտի ամսական 1 բաժնոյ համար վճարել 1 դահեկան արծաթ:
- Յօդ. Գ. Ընտրող ու ընտրելի լինելու հարկ Պօլսոյ մէջ ընկեր մը պէտք է վճարէ ընդամենը 10 բաժին, 21 տարին լրացուցած

- լինի եւ նախորդ երեք ամսոց տուրքը վճարած:
- Յօդ. Դ. Ընկերութեան պատուոյ անդամ կըրնան ընդունուիլ նոքա որք բարոյական կարեւոր ծառայութիւն մը կը մատուցանեն նմա, եւ կամ մի անգամ ընդ միշտ կը նուիրեն առ նուազն 1200 Ֆրանկ:
- Յօդ. Ե. Ընկերութեան թղթակից անդամ կրնան ընտրուիլ նոքա որք գրաւոր աշխատութեամբ կարեւոր ծառայութիւններ կը մատուցանեն նմա:

Յօդ. 2. Ընկերութեան բարերար կ'արձա- նադրուին նոքա որք գէթ 10,000 Քր. կը նը- լիրեն կամ կը կտակեն :

Յօդ. 3. Ընկերութիւնը ճիւղ կը հաստատէ այն ամեն տեղ ուր որ հարկ տեսնէ :

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 4. Ընկերութիւնը պաշտօնական երկու մարմին ունի, Կեդրոնական ժողովը եւ Տնօրէն ժողովը :

ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 5. Կեղրոնական ժողովը կը ներկա- յացնէ զԸնկերութիւնը՝ որոյ օրէնսդիր եւ հա- մարառու բարձրագոյն մարմինն է :

Յօդ. 6. Կեղրոնական ժողովը կը բաղկա- նայ 72 երեսփոխաններէ, եւ եթէ ժողովը հարկ համարի՝ սոյն թիւն մինչեւ 80ի կրնայ բարձրանալ, ընտրութիւններն ժողովը ինքն կատարելով :

Յօդ. 7. Կեղրոնական ժողովը անդամոց 1/4 ն երկու տարին միանգամ վիճակաւ կը դադրի: Գաղարեւոյ տեղ ընտրութիւնը կը լի- նին Կեղրոնական ժողովը կողմանէ ներկայա- ցուած եռասպտիկ սրբազրելի ցանկի մը մէ- ջէն :

Յօդ. 8. Բացի վճակաւ դադարեալներէ, ո՛ր եւ է պատճառաւ պակասած կամ հրաժարեալ երեսփոխաններու տեղ նոր ընտրութիւնը Կեղ- րոնական ժողովը ինքն կ'ընէ :

Յօդ. 9. Երեսփոխանք անհատաբար կամ հաւաքաբար իրաւունք չունին Կեղրոնական ժողովը նիստերէն դուրս, ժողովը տուած որոշմանց գէ՛մ բողոքել եւ ընկերութեան ըն- չից նկատմամբ ո՛ր եւ է ձեռնարկ մ' ընել, նոյնպէս ոչ-երեսփոխան ընկերք, որք սակայն կրնան գրաւոր առաջարկութիւն կամ դիտո- ղութիւն ներկայացնել Կեղրոնական ժողովը, նորա Մայր դիւանի միջոցաւ :

Յօդ. 10. Կեղրոնական ժողովը իրաւունք ունի հրաժարեցնել իւր այն երեսփոխաններն որք ընկերութեան շահուց եւ օրինաց հակա- ռակ գործելու գրեց մէջ կը գտնուին :

Յօդ. 11. Կեղրոնական ժողովը կը գումար- րի՝ ի Կ. Պօլսի ամեն տարի Մարտ եւ Սեպտ- ամբոց առաջին կիրակիներն եւ իւր նիստերը կը շարունակէ մինչ ցապառուսն օրակարգի :

Յօդ. 12. Կեղրոնական ժողովը արտաքոյ կարգի նիստ կ'ընէ կամ Մայր-դիւանի որոշ- մամբ, կամ Տնօրէն ժողովը եւ կամ 10 ե- րեսփոխանաց առաջարկութեամբ :

Յօդ. 13. Կեղրոնական ժողովը կ'ընտրէ իւր մայր դիւանը՝ բաղկացեալ մի նախագահէ եւ

մի դեր-նախագահէ, մի Ատենադպրէ եւ մի դեր-Ատենադպրէ :

Յօդ. 14. Մայր-դիւանի եւ միւս դիւանաց անդամք Տնօրէն ժողովը չեն կրնար անդա- մակցիլ :

Յօդ. 15. Մայր-դիւանը եւ միւս դիւան- ները երկու տարի պաշտօն կը վարեն եւ վե- ընտրելի են :

ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 16. Ընկերութեան որո՞ծոց վարչութիւ- նը յանձնուած է Տնօրէն ժողովը մը 7 անդամ- ներէ բաղկացեալ, որոց թիւը մինչեւ 9ի կըր- նայ բարձրանալ :

Յօդ. 17. Տնօրէն ժողովը անձնիւր անդամ պատասխանատու է թէ՛ առ Տնօրէն ժողովը եւ թէ՛ առ Կեղրոնական ժողովը: Տնօրէն ժո- ղովը հաւաքաբար պատասխանատու է առ Կեղրոնական ժողովը :

Յօդ. 18. Կեղրոնական ժողովը ներկայից 1/2 ին քուէովը կ'ընտրէ Տնօրէն ժողովը Ատե- նապետ մը. ընտրեալ Ատենապետը կ'առնու- իրեն պաշտօնակից 6 է մինչեւ 8 ն անձ, ե- րեսփոխան կամ ոչ-երեսփոխան ընկերներէ, որք ընտրող կամ ընտրելի լինելու հանգամանք ունին, որոնցմով կը կազմէ Տնօրէն ժողովը, եւ որոց անուններն եւ պաշտօնները կը հաղոր- դէ Կեղրոնական ժողովը առ ի գիտութիւն :

Յօդ. 19. Ատենապետը անձնիւր անդամի պաշտօն կը յանձնէ, եւ զանոնք հրաժարեցը- նելու իրաւունք չունի առանց Տնօրէն ժող- վը հաւանութեան :

Յօդ. 20. Տնօրէն ժողովը կը պատրաստէ ընկերութեան տարեկան ելմտացոյցը եւ կը գործադրէ Կեղրոնական ժողովը վաւերաց- մանէն յետոյ. նոյնպէս Տնօրէն ժողովը կը պատրաստէ Ուսումնական յայտարարերը ո- րոց ընդհանուր սկզբունքները Կեղրոնական ժողովը վաւերացման ենթարկելէ յետոյ կը գործադրէ :

Յօդ. 21. Տնօրէն ժողովը հասոյթի նոր աղ- բիւրի մը գիմնել կամ Պիւճէէն դուրս ծախք մը ընելէ յետոյ, Կեղրոնական ժողովը հա- ւանութիւնը պարտի առնուլ, բայց ստիպո- ղական պարագաներու մէջ կրնայ ազատու- թեամբ գործել պատասխանատուութիւնը իւր վրայ առնելով :

Յօդ. 22. Տնօրէն ժողովը երեք տարի պաշ- տօն կը վարէ եւ անդամները վերընտրելի են :

ԴԻՒԱՆՔ ԵՒ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Յօդ. 23. Կեղրոնական ժողովը ունի նաեւ 4 դիւան, իւրաքանչիւրն 3 անդամէ բաղկացեալ:

ԹԱՂԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

1. Կրթական. 2. Եւսմական. 3 Օրէնսդրու- կան. 4. Նախաքննիչ :

Սոյն դիւանները կը քննեն իրենց յանձնը- լած խնդիրներն եւ կը տեղեկագրեն առ Կեղ- րոնական ժողովը :

Յօդ. 1. Ամեն տարեկան շրջանի վերջ Կեղ- րոնական ժողովը 5 անդամներէ յանձնաժո- ղով մը կ'ընտրէ, Տնօրէն ժողովը հաշիւներն եւ մատուկին վիճակը, ինչպէս նաեւ քուէ- արկեալ ելմտացոյցին ճշդիւ գործադրուած լի- նելը քննելու համար :

ԳԱՆՁԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 1. Տնօրէն ժողովը ընկերութեան դրամն ապահով տանց մէջ պարտի ղետեղել 'ի շահեցումն :

Յօդ. 2. Երբ իւր քովը հաւաքած դրամը 20 ոսկուց հասնի, ընկերութեան Գանձապե- սը պարտաւոր է յանձնել զայն դրամապահին :

Յօդ. 3. Գանձապետը մինչեւ 100 ոսկի օսմանեան իւր քով կը պահէ առ ձեռն գոր- ծածութեանց համար, հաւաքեալ դրամը գը- րամապահին յանձնելէ յետոյ ընկերութեան ծախուց համար գործածել ներքիլ չէ :

Յօդ. 4. Գրամապահէն աւնուելիք դրամոց մասին Կեղրոնական ժողովը նախապահին, Տնօրէն ժողովը Ատենապետին եւ Գանձապե- տի միաբան ստորագրութիւնք կարեւոր են :

Յօդ. 5. Ընկերութեան դրամական հա- սոյթէն առ նուազն 20% պահեստ կը մնայ :


ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 1. Կերքին կանոնադիր մը զոր կը խմբագրէ Կեղրոնական ժողովը, կը գծէ բո- լոր այն արամագրութիւններն որք վերաբե- րութիւն ունին յիշեալ յօդուածներուն գոր- ծադրութեան եղանակին, եւ որք հիմնական Կանոնադրի պէս անհրաժեշտ գործադրութեան գորութիւն ունին :

ՎԵՐԱԲՆՆԱԹԻՒՆ ԵՒ ԼՈՒԾՈՒՄՆ

Յօդ. 1. Եթէ ընկերութիւնը լուծուի, Հայոց Ազգային երեսփոխանական ժողովը ի- րաւունք ունի աէր լինել նորա բոլոր ստաց- ուածոց զորս կը յատկացնէ Հայաստանի եւ Կիլիկիոյ Հայ մանկուոյն կրթութեան առանց կրօնական խտրութեան :

Յօդ. 2. Սոյն կանոնադիրը վերաքննելի է թուականէս 3 տարի վերջը, սակայն ստիպո- ղական պարագայից մէջ Տնօրէն ժողովը եւ կամ 20 երեսփոխանք կրնան բարեփոխու- թիւններ առաջարկել Կեղրոնական ժողովը :



Յօդ. 3. Տնօրէն ժողովը 3—9 անդամներէ բաղկացեալ օժանդակ մասնախումբներ կը կարգէ Կոստանդնուպոլսոյ այն ամեն թաղի մէջ ուր հարկ տեսնէ :

Յօդ. 4. Մասնախումբն իւր մէջէն կ'ընտ- րէ մի Ատենապետ, մի Ատենադպիր եւ մի Գանձապետ, եւ Տնօրէն ժողովին կը տեղե- կագրէ այս ընտրութիւնն :

Յօդ. 5. Մասնախումբի պաշտօնն է.

1. Ընկերութեան Հիմնական Կանոնադրին համեմատ բաժանորդներ, նուիրատուներ, պատուոց եւ թղթակից անդամներ, բարե- բարներ դանել իւր թաղի մէջ :

2. Իւր արժանի դատած եղանակաւ հանգա- նակութեան ձեռնարկել, թատերական ներ- կայացումներ, նուազահանգէսներ եւ վաճա- րահանգէսներ կարդադրել, եւ գործադրել այն ամեն օրինաւոր եւ սրտաւատար միջոց- ներ որք կրնան Ընկերութեան շահաւէտ լի- նիլ ապահովապէս :

Յօդ. 6. Ամսավճարի եւ նուիրատուութեան տոմսակներն, Տնօրէն ժողովը Գանձապետի ստորագրութեամբ եւ ընկերութեան կնքով վաւերացեալ, ստացագրի փոխարէն կը յանձ- նուին մասնախումբին :

Յօդ. 7. Տնօրէն ժողովը, քննելով մասնա- խումբի առաջարկն, կը պատրաստէ եւ նմա կը յղէ բարեբարներու եւ պատուոց կամ թղթ- թակից անդամներու ուղղուելիք չնորհակա- լու պաշտօնագիրներն եւ վկայականներն :

Յօդ. 8. Մասնախումբն պարտաւոր է ա- մեն ամսի հասոյթներն եւ հաշիւներն մինչեւ 15 օր Տնօրէն ժողովին յղել ընկալագրի բու- ներուն հետ, ինչպէս նաեւ նոր ընկերներու եւ նուիրատուներու անուանց եւ վճարմանց ցուցակն :


Յօդ. 9. Մասնախումբն պարտաւոր է գէթ ամիսն մի անգամ թղթակցիլ Տնօրէն ժող- վին հետ, տեղեկագրելով նմա իւր գործառ- նութիւնք եւ այն նոր միջոցներ ոյց մտադիր է ձեռնարկել ի նպատակ Ընկերութեան :

Յօդ. 10. Մասնախումբն ամսավճարներն եւ նուէրներն աճեցունելու եւ հաւաքելու գործին կրնայ յատկացունել նոցա հասոյթի մինչեւ 15% ն, եթէ այս ծախք անհրա- ժեշտ է :

Յօդ. 11. Ամսավճարէ եւ նուիրատուութե- նէ զատ հասութարքեր ձեռնարկներու համար եղած ծախքերն հասոյթէն կը հողացուին :

Յօդ. 12. Եթէ մասնախումբն կամ իւր ան- դամներէն մին Ընկերութեան վնասակար ըն-

Թացքի մէջ դանուի, Տնօրէն ժողովն իսկոյն կը լուծէ մասնախումբն կամ պաշտօնանկ կ'անէ յանցապարտ անդամն :



ՃԻՒՂԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Յօդ. Ա. Տնօրէն ժողովն իւր կողմէ կարգուած եւ 3-13 անդամներէ 'բաղկացեալ տեղական մասնախումբներու միջոցաւ ձեւ կը հաստատէ այն ամեն քաղաքի մէջ ուր հարկ տեսնէ (Հիմնական Կանոնադիր, Յօդ. 3) :

Յօդ. Բ. Մասնախումբն իւր մէջէն կ'ընտրէ մի Ատենապետ, մի Ատենադպիր եւ մի Գանձապետ, եւ Տնօրէն ժողովին կը տեղագրէ այս ընտրութիւնն Տնօրէն ժողովն մասնախումբի կազմութիւնն կը հաղորդէ Կեդրոնական ժողովոյ :

Յօդ. Գ. Մասնախումբի պաշտօնն է

1. Ընկերութեան Հիմնական Կանոնադրին համեմատ բաժանորդներ, նուիրատուներ, պատուոյ եւ թղթակից անդամներ, բարերարներ եւ կտակարարներ գտնել իւր քաղաքի մէջ :

2. Իւր արժան գատած եղանակաւ հանգանակութեանց ձեռնարկել, թատերական ներկայացումներ, նուազանդէսներ եւ վաճառանդէսներ կարգադրել, եւ գործադրել այն ամեն օրինաւոր եւ պատուաւոր միջոցներ որք կրնան Ընկերութեան շահաւէտ լինիլ ապահովագրելս :

Յօդ. Դ. Ամեն մասնախումբ պարտաւոր է Կոստանդնուպոլսոյ մէջ նշանակել մի ներկայացուցիչ, որոյ միջոցաւ Տնօրէն ժողովն կը յղէ ստմանկներն եւ կ'ընդունի դումարներն :

Յօդ. Ե. Ամսալճարի եւ նուիրատուութեան ստմանկներն, Տնօրէն ժողովոյ Գանձապետի ստորագրութեամբ եւ Ընկերութեան կնքով վաւերացեալ, ստացադրի փոխարէն կը յանձնուին ներկայացուցչին իւր մասնախումբին զրկուելու համար :

Յօդ. Զ. Տնօրէն ժողովն ընկերով մասնախումբի առաջարկն, կը պատրաստէ եւ նմա կը յղէ բարերարներու եւ պատուոյ կամ թրդթակից անդամներու ուղղութիւնը շնորհակալու պաշտօնագիրներն եւ վկայականներն :

Յօդ. Է. Մասնախումբն պարտաւոր է ամեն երկամսեայի հասոյթներն եւ հաշիւներն մինչեւ 15 օր Տնօրէն ժողովին յղել, ընկալագրի բուններուն հետ, ինչպէս նաեւ նոր ընկերներու եւ նուիրատուներու անուանց եւ վճարմանց ցուցակն :

Յօդ. Ը. Մասնախումբն պարտաւոր է դէթ երկու ամիսն մի անգամ թղթակցիլ Տնօրէն

ժողովին հետ, տեղեկագրելով նմա իւր գործառնութիւնը եւ այն նոր միջոցներ ոչոյ մտադիր է ձեռնարկել ի նպատակ Ընկերութեան :

Յօդ. Թ. Մասնախումբն ստմալճարներն եւ նուէրներն աճեցնելու եւ հասարակութեան կրնայ յատկացունել նոցա հասոյթի մինչեւ 0/10 15 ն, եթէ այս ծախք անհրաժեշտ է :

Յօդ. Ժ. Ամսալճարէ եւ նուիրատուութեանէ դատ հասութեան ձեռնարկներու համար եղած ծախքերն հասոյթէն կը հողացուին :

Յօդ. ԺԱ. Եթէ մասնախումբն կամ իւր անդամներէն մին Ընկերութեան վնասակար ընթացքի մէջ դանուի, Տնօրէն ժողովն իսկոյն կը լուծէ մասնախումբն կամ պաշտօնանկ կ'անէ յանցապարտ անդամն :



ԿՐԹԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Ա.

ԳԻՒՂԱՅԻՆ ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆՔ

ՇՐՋԱՆ ՈՒՍՄԱՆՅ-ՉՈՐՄ ՏԱՐԻ



Ա. Տ Ա Ր Ի

1. — ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒ. — Կարգաւ եւ զըրել. վերլուծութիւն իմաստից ի ձեռն հարցի եւ պատասխանուոյ. բացատրութիւն բառից. խօսակցութիւն. մանկական սակաւատող վէպք եւ երգեր անգիր ուսուցանել բացատրութեամբ բառից եւ իմաստից :

2. — ԿՐՕՆՔ. — Տէրունական աղօթք հանդերձ բացատրութեամբ :

3. — ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ. — Թուոց վրայ մտաւոր շորս գործողութիւնը ակներեւ առարկայից վրայ հարցումներով. թուանշան ճանչել եւ գրել :

4. — ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. — Բերանացի վէպ երեւելի անձանց եւ դիպաց Հին պատմութեան :

5. — ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ. — Գիւղ եւ շրջականերն. ցամաքի եւ ծովու այլ եւ այլ գրից եւ մասանց անուանք ծանօթ վայրաց օրինակներով. կողմանք երկրի :

6. — ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ. — Ընթերցարանի դասէն եւ շրջակայ առարկաներն նիւթ առնելով աղացոց միտքն վարժեցնել զիտելու, բաղդատելու եւ ճանչնալու :

7. — ԳԻՐ. — Նախ կաւիճով տախտակի վրայ, ապա կապար գրչով թուղթի վրայ եւ յետոյ մելանով :

8. — ԵՐԳ. — Աղգային եւ Եկեղեցական :

9. — ՄԱՐԿԱԿՐԹՈՒԹԻՒՆ. — Մարմնոյ շարժմունք եւ փորձք գործեաց վրայ (եթէ այս վերջինը կան) :

10. — ՁԵՌԱԳՈՐԾ. — Կար եւ ասղնագործութիւն աղջկանց համար :

Բ. Տ Ա Ր Ի

1. — ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒ. — Ընթերցումն. վերլուծութիւն իմաստից ի ձեռն հարցի եւ պատասխանուոյ. անփոփոմն ընթերցումոյն. խօսակցութիւն. ուղղագրութիւն. գրաւոր բացատրութիւն պարզ եւ ընտանի գաղափարաց. ուսումն ի բերան մանկական համառօտ երգոց եւ վիպաց, բացատրութեամբ բառից եւ իմաստից :

2. — ԿՐՕՆՔ. — Յիսուսի կենաց գլխաւոր անցից եւ Հին Կտակարանի նշանաւոր եւ առաքինի անձանց բերանացի պատմութիւնն հանդերձ բացատրութեամբ եւ խորհրդածութեամբ :

3. — ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ. — Թուոց վրայ մտաւոր եւ գրաւոր շորս գործողութիւնը գործնական եղանակաւ :

4. — ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. — Բերանացի վէպ երեւելի անձանց եւ դիպաց Հին պատմութեան :

5. — ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ. — Աշխարհացոյց տախտակի գործածութիւն. Ասիական Տաճկաստանի նշանաւոր քաղաքք եւ վայրք :

6. — ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ. — Բնական եւ արուեստական ընտանի առարկայից ծանօթութիւն :

7. — ԳԻՐ. — Շարունակութիւն :

8. — ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ. — Երկրաչափական ձեւեր, կահեր, անօթներ, մարմնոյ մասեր, կենդանիք եւ բոյսք, գիւղային տեսարանք, զիմագծութիւն աստիճանաբար, ընդօրինակութեամբ եւ ընականէն :

9. — ԵՐԳ. — Աղգային եւ Եկեղեցական :

10. — ՄԱՐԿԱԿՐԹՈՒԹԻՒՆ. — Մարմնոյ շարժմունք եւ փորձք գործեաց վրայ (եթէ այս վերջինը կան) :

11. — ՁԵՌԱԳՈՐԾ. — Կար եւ ասղնագործութիւն աղջկանց համար :

12. — ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Բարին ու չարն, օգտակարն ու վնասակարն, առաքինութիւնքն ու մոլութիւնքն եւ մարդոյ առ Աստուած, առ ընկերս, առ ազգն եւ առ անձն պարտաւորութիւնքն, ի ձեռն բերանացի պատմութեանց, ընթերցումոյ բացատրութեան, դպրոցական կենաց այլ եւ այլ դէպքերէն հանուած խոր-

հրդածութեանց եւ խրատուց, ըստ հասակի եւ իմացողութեան մանկանց :

Գ. Տ Ա Ր Ի

1. — ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒ. — Ընթերցումն եւ բացատրութիւն. վերլուծութիւն իմաստից, նախադասութեանց եւ բառից. բառագիտական վարժք. ուղղագրութիւն. շարագրութիւն պարզ. ուսումն ի բերան պարզ հատուածոց հանդերձ բացատրութեամբ բառից եւ իմաստից :

2. — ԿՐՕՆՔ. — Համառօտ տեսութիւն Հին Կտակարանի պատմութեան :

3. — ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ. — Կոտորակք (տասանորդականք եւ հասարակ), չորս գործողութիւնք կոտորակաց. չափք եւ կշիւք-լնդիրք :

4. — ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. — Համառօտ պատմութիւն սկիզբէն մինչեւ մեր օրերը :

5. — ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ. — Ասիական եւ Եւրոպական Տաճկաստան (գաւառք, դաւառագլուխք, գլխաւոր քաղաքք եւ ընական մասունք) :

6. — ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ. — Մարդ, իւր մարմնոյն մասերն, իւր գործարաններն, սընունդ, նիւթք մնայեան. հագուստ, նիւթք հանդերձից : Բնակարան, մասունք շինութեան : Անօթք, գործիք, գործածութիւն եւ կազմութիւն նոցին. կրպակ եւ շուկայ, արհեստք. առեւտուր. դրամ. գիւղ. քաղաք. հայրենիք. վարչութիւն. տուրք եւ այլն :

7. — ԳԻՐ. — Շարունակութիւն :

8. — ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ. — Երկրաչափական ձեւեր, կահեր, անօթներ, մարմնոյ մասեր. կենդանիք եւ բոյսեր, գիւղային տեսարանք, զիմագծութիւն աստիճանաբար, ընդօրինակութեամբ եւ ընականէն :

9. — ԵՐԳ. — Աղգային եւ Եկեղեցական :

10. — ՄԱՐԿԱԿՐԹՈՒԹԻՒՆ. — Մարմնոյ շարժմունք եւ փորձք գործեաց վրայ (եթէ այս վերջինը կան) :

11. — ՁԵՌԱԳՈՐԾ. — Կար եւ ասղնագործութիւն աղջկանց համար :

12. — ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Բարին ու չարն, եւ այլն (նման Բ. սարքոյ) :

Գ. Տ Ա Ր Ի

1. — ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒ. — Ընթերցումն եւ բացատրութիւն. համառօտ քերականութիւն. վերլուծութիւն նախադասութեանց եւ

բառից . բառագիրական վարժք . ուղղագրութիւն . շարագրութիւն . ուսումն ի բերան հատընտիր գիւրահասկանալի հատուածոց , բացատրութեամբ բառից եւ իմաստից :

2. — ԿՐՕՆՔ . — Եկեղեցին , նորա դաւանութիւնքն , նորա կարգերն , նորա խորհուրդներն , նորա տօներն եւ նորա պատուէրներն :

3. — ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ . — Երեքի կանոն -տողոսի կանոն գործնական , թուաբանութիւն :

4. — ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . — Համառօտ Օսմանեան պատմութիւն . — Համառօտ Հայոց պատմութիւն :

5. — ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ . — Ընդհանուր ծանօթութիւնք աշխարհի հինգ մասանց վերայ (բնական մասունք , մայրաքաղաքք , գլխաւոր քաղաքք , գլխաւոր բերքք) :

6. — ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ . — Երկիր , իւր արտադրութիւնք . գլխաւոր տեսակք կենդանեաց , բուսոց եւ մտաղայ . զմեզ շրջապատող մարմնոց բացատրութիւնք (Չուր , օդ եւ ջր) :

Հողագործական գիտելիք — ցանել եւ հնձել — պտղատու ծառեր — բանջարեղէնք — պանիր , կարագ եւ այլն շինելու եղանակներ :

Երկիր , արեւ եւ լուսին — նոցա յարաբերութիւնք . եղանակք , գիշեր եւ ցերեկ , խաւարմունք , աստեղք , գիսաւորք :

7. — ԳԻՐ . — Շարունակութիւն :


8. — ԳՍԱԳՐՈՒԹԻՒՆ . — Երկրաչափական ձեւեր , կահեր , անօթներ , մարմնոց մասեր , կենդանիք եւ բոյսք , գիւղային տեսարանք , զիմագծութիւն աստիճանաբար , ընդօրինակութեամբ եւ բնականէն :

9. — ԵՐԳ . — Ազգային եւ եկեղեցական :

10. — ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԻՒՆ . — Մարմնոց շարժմունք եւ փորձք գործեաց վրայ (եթէ այս վերջինք կան) :

11. — ՁԵՌԱԳՈՐԾ . — Կար եւ ասեղնագործութիւն աղջկանց համար :

12. — ԲԱՐՈՅԱԿԱՆ . — Բարին ու չարն եւ չնային եւ շարունակութիւն :



ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՔ

ՇՐՋԱՆ ՈՒՍՄԱՆՅՑ — ՎԵՑ ՏԱՐԻ

Ա . Բ . Գ . ԵՒ Դ . ՏԱՐԻՆԵՐ

ՆԱԽՅ . — Այս առաջին չորս տարւոյ յայտադիրն գիւղային նախակրթարանաց յայտա-

դիրն նման է ճիշտ , բաց ի Տաճկերէն լեզուէ որ կ'սկսի Դ . տարիէն , յորում աշակերտք պիտի ուսանին ընթերցումն , գիր եւ ուղղագրութիւն Տաճկերէն լեզուի :

Ե . ՏԱՐԻ

1. — ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ . — Քերականութիւն գրաբար լեզուի . հրահանգք գրաբար եւ աշխարհաբար լեզուաց վրայ . քերականական վերլուծութիւն . հատընտիր ընթերցուածք հանդերձ բացատրութեամբք . շարագրութիւն . ուսումն ի բերան հատընտիր գրուածոց :

2. — ԿՐՕՆՔ . — Կրօնադիտութիւն եւ համառօտ պատմութիւն Հայաստանեայց եկեղեցոյ :

3. — ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ . — Տեսական թրւարանութիւն :

4. — ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . — Պատմութիւն Յունաց եւ Հռոմէացոց :

5. — ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ . — Ասիական եւ Եւրոպական Տաճկաստան , ընդհանուր աշխարհագրութիւն բնական , քաղաքական եւ առեւտրական :

6. — ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . — Տարերք կենդանաբանութեան եւ բուսաբանութեան :

7. — ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ . — Համառօտ գիտելիք :

8. — ՏԱՃԿԵՐԷՆ . — Ընթերցումն , գիր , ուղղագրութիւն եւ թարգմանութիւն — պարզ կանոնք :

9. — ՅՐԱՆՍԵՐԷՆ . — Ընթերցումն եւ գիր , ընտիր հատուածոց ի բերան ուսումն . հրահանգք Քրանսերէնէ ի հայ եւ փոխադարձաբար :

10. — ԳԻՐ . — Շարունակութիւն :

11. — ԳՍԱԳՐՈՒԹԻՒՆ . — Երկրաչափական ձեւեր , կահեր , անօթներ , մարմնոց մասեր , կենդանիք եւ բոյսք , գիւղային տեսարանք , զիմագծութիւն աստիճանաբար :

12. — ԵՐԳ . — Ազգային եւ եկեղեցական :

13. — ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԻՒՆ . — Մարմնոց շարժմունք եւ փորձք գործեաց վրայ (եթէ այս վերջինք կան) :

14. — ՁԵՌԱԳՈՐԾ . — Կար եւ ասեղնագործութիւն աղջկանց համար :

Զ . ՏԱՐԻ

1. — ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ . — Ընթերցումն գրաբար մատենագրութեան եւ վարժութիւնք գրաբար շարագրութեան . տրամաբանական

վերլուծութիւն : Հատընտիր ընթերցուածք հանդերձ բացատրութեամբք : Շարագրութիւն , տեսութիւն ի վերայ պատմութեան Հայ գրագրութեան : Ուսումն ի բերան հատընտիր գրուածոց :

2. — ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹԻՒՆ . — Երկրաչափական գիտելիք — տարերք հանրահաշուոյ :

3. — ՏՈՄԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ . — Հանդերձ առեւտրական ծանօթութեամբք :

4. — ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . — Համառօտ տեսութիւն ի վերայ միջին դարու . — Պատմութիւն Օսմանեան Պետութեան . — Ժամանակակից պատմութիւն :

5. — ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ . — Տիեզերական գիտելիք :

6. — ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . — Տարերք մետաղաբանութեան եւ երկրաբանութեան :

7. — ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ . — Շարունակութիւն նախորդ Տարւոյ :

8. — ՏԱՃԿԵՐԷՆ . — Ընթերցումն , գիր , ուղղագրութիւն , թարգմանութիւն , շարագրութիւն , կանոնք :

9. — ՅՐԱՆՍԵՐԷՆ . — Քերականութիւն , թարգմանութիւն , Քրանսերէն եւ հայերէն շարագրութիւն :

10. — ԳՍԱԳՐՈՒԹԻՒՆ . — Երկրաչափական ձեւեր , կահեր , անօթներ , մարմնոց մասեր , կենդանիք եւ բոյսք , գիւղային տեսարանք , զիմագծութիւն աստիճանաբար , ընդօրինակութեամբ եւ բնականէն :

11. — ԵՐԳ . — Ազգային եւ եկեղեցական :

12. — ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԻՒՆ . — Մարմնոց շարժմունք եւ փորձք գործեաց վրայ (եթէ այս վերջինք կան) :

13. — ՁԵՌԱԳՈՐԾ . — Կար եւ ասեղնագործութիւն աղջկանց համար :

14. — ՎԱՐՁԱԿԱՆԳԻՏԵԼԻՔ . — Կազմութիւն Օսմանեան կառավարութեան . Վարչական բաժանմունք — Տուրք եւ Օրէնք :



Ա .

ՎԻՃԱԿԱԳԻՐ ՎԱՐՃԱՐԱՆՑ

Ա . ՏԱՐԻՈՍ

1. Քղի — Գասապա , բարձրագոյն նախակրթարան .

Բացումն	1 Գեկտ . 1880
Թիւ աշակերտաց ձմեռն	160-180
» » ամառն	400

Ուսուցիչք
Տնտես
ՆԱԽՅ . Սոյն վարժարանին ծախուց համար Տեղացիք կը վճարեն տարեկան 66 Օսմ . ոսկի :

2. Քղի — Գասապա , բարձրագոյն նախակրթարան իջական .

Բացումն	1 Գեկտ . 1880
Թիւ աշակերտուհեաց ձմեռն	100-140
» » ամառն	80

Վարժուհի եւ ուսուցիչք
ՆԱԽՅ . Սոյն վարժարանին ծախուց համար Աղզանուէր Հայուհեաց Ընկերութիւնը կը վճարէ տարեկան 140 Օսմ . ոսկի :

Քղի աւանք կը գտնուի համանուն գետակին հովտին մէջ , Երկրայի արեւելեան կողմն , 20 ժամ հեռի , իբր 200 տուն Հայ բնակչօք :

3. Քղի — Խուբա , գիւղային նախակրթարան .

Բացումն	1 Գեկտ . 1879
Թիւ աշակերտաց ձմեռն	120
» » ամառն	40-50

Ուսուցիչք
Տնտես
ՆԱԽՅ . Խուբա կը գտնուի Քղիի արեւմտեան կողմն , իբր 3 ժամ հեռի , 185 տուն Հայ բնակչօք :

4. Բերրի (Չարսանճաղ) , գիւղային նախակրթարան .

Բացումն	1 Օգոստ . 1879
Թիւ աշակերտաց ձմեռն	140
» » ամառն	400

Տնտես
ՆԱԽՅ . Բերրի գիւղաքաղաքն , կեդրոն Չարսանճաղի վիճակին , կը գտնուի Քարբերդի հիւսիսային կողմը , 12 ժամ հեռի , եւ Բալուայ արեւմտեան կողմը իբր 6 ժամ , 430 տուն Հայ բնակչօք :

5. Չճկածաղ , գիւղային նախակրթարան երկսեռ .

Բացումն	1 Ապրիլ 1880
Թիւ աշակերտաց եւ աշակերտուհեաց ձմեռն	100-140
» » ամառն	80-90

Ուսուցիչք
ՆԱԽՅ . Չճկածաղ կը գտնուի Քարբերդի հիւսիսակողմը 12 ժամ հեռի Եփրատայ մօտ , եւ ունի 207 տուն Հայ բնակիչ :

6. Խօջմաթ (Բալու) , գիւղային նախակրթարան .

Բացումն 1 Մարտ 1880
 Թիւ աշակերտաց ձմեռն 70-80
 » » ամառն 20-30
 Ուսուցիչ (առ այժմ) 1
 ԵԱՆՕԹ. Սոյն վարժարանին ծախուց համար տեղացիներէն Մեծ. Պօղոս Եղիկեան առաջին տարուց համար սխախ վճարէ 15-20 Օ. Ուսուցմամբ գիւղն, իբր 80 տուն Հայ բնակչօք, կը գտնուի Բալուայ հիւսիսակողմը 2 ժամ հեռի, գեղեցկատեսիլ դրոց մէջ:

Բ. ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ

1. Մուշ, բարձրագոյն նախակրթարան. Բացումն 13 Նոյեմ. 1878
 Թիւ աշակերտաց 85
 Ուսուցիչք 4
 Տնտես 1
 ԵԱՆՕԹ. Մուշ, հայաբնակ կարեւոր քաղաք, կը գտնուի համանուն ընդարձակ եւ բարեբեր դաշտին հարաւակողմն, յոսս Սիւ լեքին, Մեղրապետոյ (Օժանդակ Արածանուց) մէկ ճիւղին վրայ:

3. Բաղէշ, նախակրթարան. Բացումն 3 Նոյեմ. 1879
 Թիւ աշակերտաց 50
 Ուսուցիչք 2
 Տնտես 1
 ԵԱՆՕԹ. Բաղէշ կը գտնուի Վանայ ծովուն արեւմտեան կողմը, խոր հովտի մը մէջ եւ ունի իբր 1500 տուն Հայ բնակիչ:

3. Լիզ (Պուլանք), գիւղացին նախակրթարան. Բացումն 20 Հոկտեմ. 1879
 Թիւ աշակերտաց 36
 Ուսուցիչք 2
 ԵԱՆՕԹ. Սոյն վարժարանին ծախուց համար Բարեգործական Ընկերութիւնը կը վճարէ տարեկան 50 Օսմ. ոսկի:
 Լիզ, Հայաբնակ գիւղ իբր 60 տուն բնակչօք, կը գտնուի Պուլանքայ վիճակին մէջ, Արածանուց մօտ եւ յոսս Ալիճան լեռանց:

4. Կոր (Ս. Դանիէլ), գիւղացին նախակրթարան. Բացումն Յունիս, 1879
 Թիւ աշակերտաց (գիշերօթիկ) 20
 Ուսուցիչք 2
 Տնտես 1
 ԵԱՆՕԹ. Կորայ վանքը կը գտնուի համանուն գիւղին մօտ, Պուլանքայ վիճակին մէջ, ըն-

դարձակ եւ բարեբեր հողերով շրջապատուած Բուն Կոր գիւղն ունի 150 տուն Հայ բնակիչ, համանուն վտակին վրայ, Արածանուց ձախակողմը:

5. Զէվիրմէ (Խնուս), գիւղացին նախակրթարան.

Բացումն 1 Ապրիլ, 1881
 Թիւ աշակերտաց ձմեռն 40
 » » ամառն 30
 Ուսուցիչք (առայժմ) 1
 ԵԱՆՕԹ. Սոյն վարժարանին ծախքը կը հագան տեղացիք: Զէվիրմէ գիւղը կը գտնուի Խնուսայ դաշտին մէջ, Թուզլայ-Չայք մէկ վտակին վրայ, իբր 60 տուն Հայ բնակչօք:

6. Գօվանաղք (Խնուս), գիւղացին նախակրթարան.

Բացումն 1 Ապրիլ, 1881
 Թիւ աշակերտաց 60
 Ուսուցիչք 2
 ԵԱՆՕԹ. Սոյն վարժարանին ծախքն տեղացիք կը հոգան: Գօվանաղք կը գտնուի Խնուսայ դաշտին մէջ Զէվիրմէի մօտ եւ ունի իբր 80 տուն Հայ բնակիչ:

7. Դատուան, գիւղացին նախակրթարան. Բացումն 16 Մարտ, 1879

Թիւ աշակերտաց 36
 Ուսուցիչք 2
 ԵԱՆՕԹ. Դատուան կը գտնուի Վանայ ծովուն արեւմտեան եզրին վրայ Բաղէշէն 4 ժամ հեռի: Նաւահանգիստը բանուկ է եւ շարունակ կը հաղորդակցի Վանայ հետ: Դատուան Հայաբնակ գիւղ մ'է 527 բնակչօք եւ կեդրոն բազմաթիւ Հայ գիւղերու:

8. Սղերդ, գիւղացին նախակրթարան. Բացումն 3 Մարտ, 1881

Թիւ աշակերտաց 80
 Ուսուցիչք 2
 Տնտես 1
 ԵԱՆՕԹ. Սոյն վարժարանին ծախուց համար Սովետոյ Կեդր. Յանձնաժողովը կը վճարէ տարեկան 50 Օսմ. ոսկի, եւ նախնական ծախուց համար միանգամ ընդ միշտ վճարած է 25 Օսմ. ոսկի:

Սղերդ կը գտնուի Բաղէշայ հարաւակողմը, Տիգրիսի արեւելեան ճիւղին (Պօհիթան) մօտ, եւ կարեւոր կեդրոն բազմաթիւ Հայ եւ Քիւրտ գիւղերու: Իբր 120 տուն Հայ բնակչօք, եւ ուր Հայք մայրենի լեզուն կորուսած կը խօսին արաբերէն եւ քրդերէն:

Գ. ԱԼԱՇԿԵՐԱՆ

1. Ալաշկերտ, բարձրագոյն նախակրթարան. Բացումն 19 Սեպտեմ. 1879
 Թիւ աշակերտաց 100-110
 Տնօրէն-Դասատու 4
 Ուսուցիչք 3
 Տնտես 1
 ԵԱՆՕԹ. Սոյն վարժարանին համար Վեհ. Կաթողիկոսը կը վճարէ տարեկան Օսմ. ոսկի 94, 36. Ալաշկերտի գաղթականաց համար հաւաքեալ գրամին տոկոսն:

Ալաշկերտ կամ Թօբրագ-Գայէ (ի հնումն Վաղարշակերտ) կը գտնուի համանուն դաշտին հիւսիսային կողմը, Շահ Եօլէ լեռանց ստորաբ իբր 125 տուն Հայ բնակչօք:

Դ. ՎՍՍՊՈՒՐԱՆ

1. Ալիւր, գիւղացին նախակրթարան. Բացումն 1 Նոյեմ. 1876
 Թիւ աշակերտաց ձմեռն 200
 » » ամառն 40
 Ուսուցիչք 2
 Տնտես 1
 ԵԱՆՕԹ. Ալիւր գիւղն ունի 223 տուն Հայ բնակիչ եւ կը գտնուի Վանայ հիւսիսակողմը 4 ժամ հեռի, պտղաբեր պարտէզներով եւ այգեստաններով շրջապատեալ:

2. Կիւնենց, գիւղացին նախակրթարան. Բացումն 1 Նոյեմ. 1878
 Թիւ աշակերտաց ձմեռն 120
 » » ամառն 40
 Ուսուցիչք 2
 Տնտես 1
 ԵԱՆՕԹ. Կիւնենց կը գտնուի Վանայ արեւելեան հիւսիսային կողմը Թիւրք լեռնաձորին մէջ, քաղաքէն ճիշդ 4 1/2 ժամ հեռի, եւ ունի իբր 100 տուն Հայ բնակիչ:

3. Կէմ, գիւղացին նախակրթարան երկսեռ. Բացումն 16 Մայիս, 1879
 Թիւ աշակերտաց ձմեռն 120
 » » ամառն 60-70
 Ուսուցիչք 2
 ԵԱՆՕԹ. Սոյն վարժարանի ծախուց համար Բարեգործական Ընկերութիւնն կը վճարէ տարեկան 50 Օսմ. ոսկի:

Կէմ գիւղն կը գտնուի Վանայ հարաւային արեւելեան կողմը, 4 ժամ հեռի Հայոց Ձորին մէջ, Անգղ Գետակին աջակողմեան եզրին մօտ, եւ ունի 80 տուն Հայ բնակիչ:

4. Խարակոնիս, գիւղացին նախակրթարան. Բացումն 3 Նոյեմ. 1879
 Թիւ աշակերտաց ձմեռն 110
 » » ամառն 30-40
 Ուսուցիչք եւ օգնական 2
 Տնտես 1
 ԵԱՆՕԹ. Սոյն վարժարանի ծախուց համար Մեծ. Պ. Մ. Սանասարեանց կը վճարէ տարեկան 44 Օսմ. ոսկի:

Խարակոնիսի գիւղը կը գտնուի Վանայ արեւելեան կողմը, իբր 7 ժամ հեռի, Արշակի լճին մօտ, շուրջ 120 տուն Հայ բնակչօք:

5. Գործոթ, գիւղացին նախակրթարան. Բացումն 6 Նոյեմ. 1879

Թիւ աշակերտաց ձմեռն 60-65
 » » ամառն 20-25
 Ուսուցիչք 1
 Տնտես 1
 ԵԱՆՕԹ. Գործոթ գիւղն իբր 545 Հայ բնակչօք կը գտնուի Վանայ հիւսիսային արեւելեան կողմն 14 ժամ հեռի, Բերկրի (Արեւբանի) վիճակին մէջ, ընդարձակ դաշտերով եւ Հայ գիւղերով շրջապատեալ:

Ե. ԿԻԼԻԿԻԱ

1. Ատանա, բարձրագոյն նախակրթարան արական.

Բացումն Յունիս, 1881
 Թիւ աշակերտաց 130
 Ուսուցիչք 6
 Տնտես 1

2. Ատանա, բարձրագոյն նախակրթարան իգական.

Բացումն Յունիս, 1881
 Թիւ աշակերտուհեաց 425
 Ուսուցիչք եւ վարժուհիք 4
 Տնտես 1

3. Ատանա, նախակրթարան. Բացումն Յունիս, 1881

Թիւ աշակերտաց 400
 Ուսուցիչք 3
 Տնտես 1
 ԵԱՆՕԹ. Սոյն երեք վարժարանաց ծախքն տեղացիք կը հոգան:

Ատանա, նշանաւոր կեդրոն Հայոց ի Կիլիկիա, ունի այժմ 30,000 բնակիչ, որոյ կէսն Հայ է, բայց ըստ մեծի մասին թրքախօս:

4. Հաճըն, բարձրագոյն նախակրթարան արական .

Բացումն	18 Փետրվար, 1879
Թիւ աշակերտաց	60
Տնօրէն-դասատու	1
Ուսուցիչք	2

5. Հաճըն, բարձրագոյն նախակրթարան իգական .

Բացումն	18 Փետրվար, 1879
Թիւ աշակերտուհեաց	75
Վարժուհիք	2
Ուսուցիչ	1
Տնտես	1

Եւսոթ. Այս վերջնայն ծախուց համար Ազգ. Հայուհեաց Ընկերութիւնը կը վճարէ տարեկան 100 Օսմ. ոսկի:

Հաճըն կը գտնուի Կիլիկիոյ լեռանց մէջ օգուէտ վայր մը, եւ ունի 10.000 Հայ բնակիչ:

6. Սիս, նախակրթարան երկսեռ .

Բացումն	Գեղեցեմէր, 1879
Թիւ աշակերտաց	45
Ուսուցիչք	2
Տնտես	1

Եւսոթ. Սիս գիւղաքաղաքը կը գտնուի Ատա- նայի հիւսիսային արեւելեան կողմը, Տորոս լեռներէն 5-6 ժամ հեռի, վաստակող զիր- քի մը մէջ, եւ ունի 400 տուն Հայ բնակիչ, որք մշակ, խաշնարած եւ վրանաբնակ գիւղականներ են:

7-8. Զէյթուն, նախակրթարան արական եւ իգական .

Բացումն	Օգոստոս, 1879
---------	---------------

Թիւ աշակերտաց	60
» աշակերտուհեաց	65
Ուսուցիչք եւ վարժուհի	4

Եւսոթ. Զէյթուն կը գտնուի Տորոս լեռանց մէջ, Մարաշի հիւսիսային արեւմտեան կողմը, շուրջ 1000 տուն Հայ բնակչօք:

9-10 Բերիա, բարձրագոյն նախակրթարան արական եւ նախակրթարան իգական .

Բացումն	Ապրիլ, 1880
Թիւ աշակերտաց	100
» աշակերտուհեաց	80
Ուսուցիչք եւ վարժուհիք	6
Տնտես	1

Եւսոթ. Սոյն վարժարանի տարեկան ծախուց համար Բերիացիք կը վճարեն 170 Օսմ. ոսկի:

11. Ղնիա եւ Եագուպիէ, գիւղային նախակրթարան .

Բացումն	Սեպտեմբեր, 1884
Թիւ աշակերտաց	20
Ուսուցիչ	1

Եւսոթ. Սոյն վարժարանին ծախքը կը հոգան Բերիացիք:

Ղնիա եւ Եագուպիէ իրարմէ քառորդ ժամ հեռաւորութեամբ գիւղեր են 150 տուն Հայ բնակչօք, Բերիոյ մասերն:

— 0 0 0 0 0 0 0 —
ԱՄՓՈՓՈՒՄՆ

Թիւ արական վարժարանաց	26
» իգական	8
» աշակերտաց	2512
» աշակերտուհեաց	800
» Ուսուցչաց եւ վարժուհեաց	79
Տեսուչք	5

Ն Ո Ւ Ի Ի Ր Ս Տ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Նուէր Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Բագուի Ազգայնոց կողմէ առ ինքն զըր- կուած գումարէն	23720	
Նուէր Ամեն. Ս. Պատրիարք Հօր 1000 բուպի	11520	75
» Վսեմ. Ապրո Ատան Բագրատունի իշխանէն Անգղ. ոսկի 22, 2	2421	
Թասերական ներկայացումներէ հասոյթ	5126	50
Սահմանադրութեան Տարեդարձներու առթիւ	2050	
Նուէր Մեծ. Ամատունիէ, Եօզլատ, ձեռամբ Մեծ. Գ. Թօփալեանի	1070	
Հանգանակեալ յ'Օտէսա, ձեռամբ Գեր. Խորէն Արքեպիսկոպոսի	1070	
Նուէր Մեծ. Յ. Իզմիրեանէ, 'ի Բէթէրսպուրի, ձեռամբ Ա. Կեն. Ս. Պատրիարք Հօր	1316	50
» Մեծ. Ս. Մ. Մինասեանէ, 'ի Եօրք, ձեռամբ Մեծ. Մ. Զերազի	1000	
Հանգանակեալ ձեռամբ Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոսի, Առաջնորդի Նոր-Չուղայի	1026	
Նուէր Սիւնեաց Ընկերութենէ, 'ի Զմիւռնիա	1000	
» Մեսրոպ զեան Ընկերութենէ, 'ի Զմիւռնիա	980	
» Միութիւն մանկանց Ընկերութենէ, 'ի Գատը գիւղ	961	
Մեծ. Թ. Թովմայեանի ձեռամբ, 'ի Չմիւռնիա	900	
Մեծ. Թէքէեանի ձեռամբ, 'ի Մարտիլիա	902	
Լսարաններէ հասոյթ	861	25
Մեծ. Մանեանի ձեռամբ, 'ի Վիլնիա Ֆրանս 200	870	
Մեծ. Կէվէրեանի ձեռամբ, Քէպէճի խանի գանձանակի հասոյթ	500	
Իւսկիւտարու Եկեղեցոյ գանձանակի հասոյթ	530	
Նուէր Մեծ. Լազեանէ, 'ի Գահիրէ, ձեռամբ հանգուցեալ Տօք. Ռախայէլեանի	435	
Հանգանակեալ 'ի Սօֆիա, ձեռամբ Մեծ. Գարլօ Սէրբոսի	300	
Նուէր «Թիւրքմանը Եփրատ» լրագրոյ խմբագրութենէ	251	25
» Մեծ. Մ. Տէօքմէճեանէ	250	
» Մեծ. Պ. Սէլեանէ, 'ի Մարտիլիա, ձեռամբ Մեծ. Կիւլպէնկեանց	220	
» Մեծ. Յ. Կիւտիկեանէ	200	
» Վսեմ. Կամարականէ, 'ի Վան	180	
» Մեծ. Կ. Քէրկոտէճեանի ձեռամբ, 'ի Զմիւռնիա	170	
» Մեծ. Ռափիկ Մարկոսեանէ	100	
» Արժ. Ներսէս վարդապետ Ասլանեանէ	95	
» Հաճօրու խանի Մեծ. Ազգայնիներէ	80	
» Հողագործասիրաց Ընկերութենէ, 'ի Ռոստոլթօ	80	
» Մի Ազգայնոց կողմէ, 'ի Նիկամիդիա	60	
» » » 'ի Սամոն	40	
» Մեծ. Յ. Ալթուն-Բարնաղեանէ	40	
» Մեծ. Ս. Զարգարեանէ եւ Պ. Աղամեանէ	38	
» Մեծ. Պ. Տէր Պօղոսեանէ	30	
» Մեծ. Յ. Արիստակէսեանէ	20	
» Մեծ. Մ. Գարիազճեանէ	20	
» Մեծ. Տօքթ. Օհան Երիւնեանէ, Եօզլատ, ձեռամբ Մեծ. Գերով- թէ Սահակեանի	100	
Մի ոմն	20	

ՆՈՒՐՈՍՏՈՒՌՈՒԹԻՒՆՔ Ի ՌՈՒՍԻԱՅԷ

Table with 4 columns: Title, Quantity, Price, Total. Includes items like 'Մշակ' and 'Վեղու Հայաստանի'.

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ՆՈՒՐՈՒԱԾ ԳՐԵԱՆՔ

Table with 4 columns: Title, Quantity, Price, Total. Includes items like 'Մեծ. Տ. Soppkor' and 'Մեծ. Ռ. Ա. Բարայեան'.

Table with 4 columns: Title, Quantity, Price, Total. Includes items like 'Մեծ. Տ. Գրիգոր Շամուանճեան' and 'Մեծ. Տ. Աւետիք Տ. Յակոբեան'.

ՏԵՍՐԲ	Բաժին ամսական	ՏԵՍՐԲ	Բաժին ամսական
Ալթուն-Տիւրքի Առաքել	10	Գրադիրեան Մարտիկ	5
Աճէմեան Թ. Գէորգ	6	Գալուստեան Կարապետ	5
Ալլահվէրտեան Աստուածատուր	5	Գէորգեան Յակոբ	5
Այվառեան Փառնակ	5	Գարազաչ Նասիպ	5
Ալթուն-Տիւրքի Տիգրան	5	Գազէզեան Գ. Գառնիկ	5
Աղանեան Տիգրան	5	Գարրիկեան Նշան	3
Աղանեան Ներսէս վարդապետ	5	Գոչումեան Յակոբ	3
Աղաճեան Լորէնցիոս	5	Գազանձեան Մկրտիչ	3
Արզրեան Սարգիս	5	Գրիգորեան Յակոբ	3
Արզրեան Օրիորդ Լիզի	5	Գաղէզեան Գ. Ներսէս	3
Ալեանաքեան Մանուկ	5	Գալուստեան Համբարձում	2
Ալլաշեան Աւետիս	5	Գարրիկեան Մկրտիչ	2
Արիկեան Գրիգոր	5	Գալուստեան Օհանձան	2
